

Հաստատված է

ԳԴՅ գիտական խորհրդի 2012թ.

մարտի 31-ի թիվ 2 նիստում

Ռեկտոր Ռ. Բ. Հակոբյան

«31» մարտի 2012թ.



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԳՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ
(փոփոխություններով)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.

1. Սույն Կանոնակարգը սահմանում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնատեղերի ստեղծման, տեղակալման, առաջխաղացման, խրախուսման, բացառիկ դեպքերում պաշտոններում նշանակման և պայմանագրի վերակնքման սկզբունքները:
2. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը, կազմի և Համալսարանի միջև աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի դրույթներին համապատասխան:
3. Համալսարանի և դասախոսների միջև սահմանված կարգով կնքվում է պայմանագիր, որին նախորդում է պաշտոնի հավակնորդի մրցութային կարգով ընտրությունը (բացառությամբ նրա հետ կնքված պայմանագրի վերակնքման և մանկավարժական հատուկ տարակարգեր զբաղեցնելու դեպքերի):

II. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԵՐ.

4. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմն ընդգրկում է հետևյալ տարակարգերը.
դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր.
 - 1) *Համալսարանի դասախոսի* պաշտոն կարող են զբաղեցնել այն անձինք, ովքեր ունեն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորման աստիճան:
 - 2) *Համալսարանի ասիստենտի* պաշտոն կարող են զբաղեցնել այն անձինք, ովքեր համապատասխան մասնագիտության գծով ունեն գիտական աստիճան կամ ավարտել են ասպիրանտուրա՝ հանձնելով թեկնածուական որակավորման բոլոր քննությունները:
 - 3) *Համալսարանի դոցենտի* պաշտոն կարող են զբաղեցնել այն անձինք, ովքեր համապատասխան մասնագիտության գծով ունեն գիտական աստիճան, դոցենտի գիտական կոչում և բուհում գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 5 տարվա ստաժ:
 - 4) *Համալսարանի պրոֆեսորի* պաշտոն կարող են զբաղեցնել այն անձինք, ովքեր, որպես կանոն, ունեն դոկտորի գիտական աստիճան, պրոֆեսորի գիտական կոչում և բուհում գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 9 տարվա ստաժ, որից ոչ պակաս, քան 5 տարին՝ դոցենտի տարակարգով:

5. Պրոֆեսորադասախոսական կազմի համար սահմանված տարակարգերին առընթեր Չամալսարանում գործում են նաև պրոֆեսորադասախոսական հատուկ տարակարգեր (ամբիոնի պաշտոնային դրույքների հաշվին)։

1) *խորհրդատու պրոֆեսոր, դոցենտ (մենթորներ)*՝ Չայաստանի Չանրապետության կամ արտասահմանյան *բուհերից*, գիտահետազոտական ինստիտուտներից, գործատու կազմակերպություններից հրավիրված և Չամալսարանում մասնակի կամ լրիվ դրույքով համապատասխան տարակարգում ժամանակավորապես ձևակերպված մասնագետ։ Այս տարակարգի հիմնական խնդիրներն են՝ վարել հատուկ դասընթացներ և գիտամեթոդական սեմինարներ, ներդնել նոր կրթական ծրագրեր և տեխնոլոգիաներ, ուսուցման մեթոդներ և կառավարման միջոցներ,

2) համատեղող *պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս*՝ Չամալսարանի կամ այլ *բուհի*, ինչպես նաև գիտահետազոտական ինստիտուտների և գործատու կազմակերպությունների համապատասխան տարակարգով և որոշակի դրույքով ժամանակավորապես ձևակերպված մասնագետ, որը համալրում է պրոֆեսորադասախոսական թափուր հաստիքը։

6. Չամալսարանի գիտական խորհուրդը կարող է հիմնել և *պրոֆեսորների* սահմանված կարգով շնորհել *պատվավոր պրոֆեսորի* կոչում՝ գիտամանկավարժական մեծ ավանդի, մենթորության և Չամալսարանին մատուցած բացառիկ ծառայությունների համար։ *Պատվավոր պրոֆեսորի* կոչում կարող է շնորհվել ինչպես *Չամալսարանի պրոֆեսորին*, այնպես էլ իրենց գործունեությամբ *Չամալսարանի* հետ կապված հայաստանցի և արտասահմանյան գիտնականներին։

7. Չամալսարանում վարչական աշխատանքի անցած դասախոսները համատեղության կարգով կարող են պահպանել իրենց պրոֆեսորադասախոսական տարակարգը և մասնակցել պրոֆեսորադասախոսական պաշտոնների տեղակալման գործընթացին՝ համաձայն սույն Կանոնակարգի 4-րդ բաժնում սահմանված կարգի։ Լիազորությունների ավարտից կամ դադարեցումից հետո նրանք կարող են Չամալսարանում զբաղեցնել գիտամանկավարժական համապատասխան պաշտոն։

8. Չամալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի խրախուսումը կատարվում է՝ հիմք ընդունելով աշխատանքային պարտականությունների բարեխիղճ կատարումը, գիտահետազոտական զգալի արդյունքների ձեռքբերումը, մենթորության հետ կապված գործառույթների իրականացումը։

9. Սկսնակ դասախոսները խրախուսվում են գիտահետազոտական գործունեության, իրենց մասնագիտական և մանկավարժական որակների շարունակական զարգացման համար։

10. Չամալսարանում կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ միջոցները.

- 1) շնորհակալության հայտնում,
- 2) միանվագ դրամական պարգևատրում,
- 3) հուշանվերով պարգևատրում,
- 4) լրացուցիչ արձակուրդի տրամադրում,
- 5) կարգապահական տույժի հանում,
- 6) խրախուսանքի այլ միջոցի կիրառում։

III. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

11. Պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման և առաջխաղացման չափանիշներն են՝

1) հավակնորդի որակավորման (ակադեմիական) աստիճանը, գիտական աստիճանը և գիտական կոչումը,

2) մանկավարժական աշխատանքի ստաժը,
3) ուսումնական, գիտահետազոտական, մեթոդական-կազմակերպչական գործունեության ձևերը և դրանց քանակական ցուցանիշները,

4) ուսանողների կողմից դասախոսի աշխատանքի որակի գնահատումը:

12. Ըստ պրոֆեսորադասախոսական տարակարգերի՝ սահմանվում են ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպչական գործունեության հետևյալ ցուցանիշները.

1) *Պրոֆեսորի* համար՝

- ա) դասախոսությունների վարում (դիպլոմավորված մասնագետի ծրագրով, բակալավրիատում և մագիստրատուրայում),
- բ) գիտամեթոդական սեմինարների անցկացում, բակալավրների և մագիստրոսների ավարտական աշխատանքների՝ թեզի կամ ատենախոսության ղեկավարում,
- գ) բակալավրի և մագիստրոսական ծրագրերով նախատեսված նոր մասնագիտությունների ու դասընթացների հիմնում և կազմակերպում,
- դ) ատենախոսության (թեկնածուական, դոկտորական) պաշտպանությունից հետո գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների, մասնավորապես՝ գիտական մենագրությունների և ուսումնական ձեռնարկների հրատարակում,
- ե) զեկուցումներ հանրապետական և միջազգային գիտաժողովներում,
- զ) ամբիոնում հետազոտական ծրագրի, խմբի, լաբորատորիայի հիմնում և ղեկավարում,
- է) մասնակցություն բուհական և արտասահմանյան գիտակազմակերպական, գիտամեթոդական, փորձագիտական, ինչպես նաև գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների, հանձնախմբերի, հանրապետական և միջազգային գիտատեխնիկական միությունների, ընկերակցությունների և այլ մարմինների աշխատանքներին,
- ը) խորհրդատվական գործունեություն, մենթորության հետ կապված գործառույթների իրականացում,
- թ) գիտության տվյալ բնագավառում ստացած արդյունքների ճանաչում հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:

2) *Դոցենտի* համար՝

- ա) դասախոսությունների վարում (բակալավրիատում և մագիստրատուրայում),
- բ) գիտամեթոդական սեմինարների անցկացում,
- գ) բակալավրի ծրագրով ուսումնառուների ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ղեկավարում,
- դ) թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հրատարակում,
- ե) ուսանողների կանոնավոր խորհրդատվությունների անցկացում, մենթորության հետ կապված գործառույթների իրականացում,
- զ) գիտահետազոտական աշխատանքների կազմակերպում և իրականացում,
- է) զեկուցումներ հանրապետական և միջազգային գիտաժողովներում,
- ը) մասնակցություն ծրագրային, մեթոդական և մշտական հանձնախմբերի, խորհուրդների, որակավորման և գիտական աստիճաններ շնորհող մարմինների, փորձագիտական և խորհրդատվական հանձնախմբերի աշխատանքներին:

3) *Ասիստենտի* համար՝

- ա) դասախոսությունների և գործնական պարապմունքների վարում (հիմնականում բակալավրիատում),
- բ) ուսանողների կանոնավոր խորհրդատվությունների անցկացում, մենթորության հետ կապված գործառույթների իրականացում,
- գ) մասնագիտական դասընթացներից կուրսային աշխատանքների ղեկավարում,
- դ) բակալավրի ծրագրով ավարտական աշխատանքների ղեկավարում,

- ե) մասնակցություն ուսումնական ստորաբաժանման ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքներին,
- զ) ավարտական կամ ուսումնական պրակտիկաների ղեկավարում:
- 4) *Ղասախոսի* համար՝
 - ա) գործնական պարապմունքների, ուսումնական սեմինարների (բացառիկ դեպքերում՝ դասախոսությունների) անցկացում,
 - բ) ուսանողների կանոնավոր խորհրդատվությունների անցկացում, մասնագիտական առարկաներից կուրսային աշխատանքների ղեկավարում,
 - գ) մասնակցություն ուսումնական ստորաբաժանման ուսումնամեթոդական աշխատանքներին:
 - դ) ուսումնական և մանկավարժական պրակտիկաների ղեկավարում:

IV. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ.

- 13. *Համալսարանի* պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնավարման տարիքային սահմանները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:
- 14. *Համալսարանի* պրոֆեսորադասախոսական կազմը համալրվում է հետևյալ ընթացակարգերով.
 - 1) *թափուր պաշտոնների տեղակալման* կարգով, որոնք ամբիոններում կարող են առաջանալ՝
 - ա) տարեկան ուսումնական բեռնվածության երաշխավորված կայուն աճի,
 - բ) պրոֆեսորադասախոսական կազմից որոշ անձանց կենսաթոշակային տարիքի հասնելու և աշխատանքից ազատվելու,
 - գ) առանձին անձանց առողջական վիճակի կամ այլ պատճառներով գիտամանկավարժական գործունեության վաղաժամկետ դադարեցման դեպքերում:
 - 2) Պրոֆեսորի, դոցենտի, ասիստենտի, դասախոսի պաշտոնների կարող են հավակնել.
 - ա) Համապատասխանաբար *պրոֆեսորի և դոցենտի* գիտական կոչումներ ունեցող անձինք, որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է սույն Կանոնակարգի 2-րդ բաժնի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերին,
 - բ) *ասիստենտի, դասախոսի*՝ համապատասխանաբար սույն Կանոնակարգի 2-րդ բաժնի 4-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի պահանջները բավարարող անձինք,
 - 3) *պաշտոններում առաջխաղացման կարգով*, որն իրականացվում է գիտամանկավարժական գործունեության բնագավառում պաշտոնի հավակնորդի ակնառու հաջողությունների և որակական առաջընթացի առկայության դեպքերում (գիտական աստիճանի շնորհում, մասնագիտության կրթական չափորոշիչի, ուսումնական և առարկայական ծրագրերի մշակում, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և ուսումնամեթոդական նյութերի հրատարակում, գիտահետազոտական գործունեության ծավալում, մասնակցություն հանրապետական և միջազգային գիտամանկավարժական միությունների, ընկերակցությունների և այլ մարմինների աշխատանքին):
 - 4) *բացառիկ դեպքերում նշանակման* կարգով համապատասխան պաշտոնների կարող են հավակնել.
 - 4.1. *պրոֆեսորի* տարակարգում՝
 - ա) *Համալսարանում* երկարամյա արդյունավետ ուսումնագիտական գործունեություն իրականացրած անձինք, որոնք ունեն թեկնածուի գիտական աստիճան ու *դոցենտի* կոչում, և որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է *պրոֆեսորին* ներկայացվող որակական չափանիշներին,

բ) առանց մանկավարժական ստաժի սահմանափակման՝ *Համալսարան* հիմնական աշխատանքի հրավիրվող առաջատար մասնագետները, որոնք ունեն դոկտորի գիտական աստիճան ու *դոցենտի* կոչում, և որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է *պրոֆեսորին* ներկայացվող որակական չափանիշներին,

4.2. *դոցենտի* տարակարգում՝

ա) *Համալսարանում* երկարամյա արդյունավետ ուսուցնագիտական գործունեություն իրականացրած ասիստենտները, որոնք չունեն գիտական աստիճան, բայց որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է *դոցենտին* ներկայացվող որակական չափանիշներին,

5) *Պրոֆեսորադասախոսական հատուկ տարակարգեր զբաղեցնելու* կարգով համապատասխան պաշտոնների կարող են հավակնել.

ա) խորհրդատու *պրոֆեսոր (դոցենտ)* և համատեղող *պրոֆեսոր (դոցենտ, ասիստենտ, դասախոս)*՝ ՀՀ և արտասահմանյան *բուհերի*, հետազոտական և գիտաարտադրական կազմակերպությունների (ծեռնարկությունների)՝ նույն գիտական կոչումն ունեցող և *պրոֆեսորադասախոսական տարակարգը զբաղեցնող անձինք*:

6) *Պաշտոններում պայմանագրերի վերակնքման* կարգով.

ա) պայմանագրի ժամկետը լրանալուց 4 ամիս առաջ, համապատասխան պաշտոնները տեղակալած անձանց նույն պաշտոններում պայմանագրերի վերակնքման գործընթացն իրականացվում է պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ սահմանված կարգով պաշտոնը զբաղեցնող անձի հաշվետվության ընդունման և ամբիոնում այդ պաշտոնի առկայության դեպքում:

7) Մրցութապայմանագրային եղանակով *Համալսարանի* պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորումն իրականացվում է հետևյալ հաջորդականությամբ.

ա) *թափուր պաշտոնների տեղակալման,*

բ) *աշտոններում առաջխաղացման,*

գ) *բացառիկ դեպքերում պաշտոններում նշանակման :*

8) Բոլոր դեպքերում հավակնորդների գործերի քննարկման արդյունքով կազմակերպվում է մրցույթ, մրցույթն անցած հավակնորդների հետ կնքվում է պայմանագիր, և նրանք հրամանագրվում են համապատասխան պաշտոններում,

9) *Պրոֆեսորադասախոսական հատուկ տարակարգեր զբաղեցնելու, պաշտոններում պայմանագրերի վերակնքման, ինչպես նաև սույն Կանոնակարգի 4-րդ բաժնի 14-րդ կետի 7-րդ ենթակետում նշված պաշտոնատեղերի հավակնորդներին առանց մրցույթ անցկացնելու* դեպքերում հավակնորդների հետ կնքվում է պայմանագիր՝ առանց մրցույթ անցկացնելու, և նրանք հրամանագրվում են համապատասխան պաշտոններում (ամբիոնում ազատ դրույթի առկայության դեպքում):

15. *Համալսարանում* գիտամանկավարժական բոլոր թափուր պաշտոնների տեղակալումը իրականացվում է ըստ աշխատանքային պայմանագրի, որը կնքվում է մինչև 5 տարի ժամկետով:

16. Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման գործընթացում պաշտոնի հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի ցանկը, ներկայացման ժամկետը, հավակնորդների գործերի քննարկման ընթացակարգը, մրցույթի անցկացումը, պայմանագրի կնքումը և պաշտոնում հրամանագրումը սահմանվում են համապատասխան կարգերով:

17. *Համալսարանում* պրոֆեսորադասախոսական նոր տարակարգերի անցնելիս չի թույլատրվում աշխատավարձի չափի նվազեցում նախկինի համեմատությամբ:

18. Պրոֆեսորադասախոսական կազմի հետ կնքված պայմանագրի ժամկետում, որպես կանոն, ուսանողների շրջանում անցկացվում է ուսուցման և մանկավարժական գործունեության որակի գնահատման անանումն սոցիոլոգիական հետազոտություն, որի

անցկացման կարգը, հարցման թերթիկների բովանդակությունը և գործունեության գնահատման չափանիշները սահմանվում են համապատասխան կարգով:

19. Տարբեր պատճառներով առկա պաշտոնատեղերի վերացման (ուսումնական ծանրաբեռնվածության զգալի նվազում, ֆակուլտետի, ամբիոնի լուծարում և այլն), ինչպես նաև պայմանագիրը չվերակնքելու դեպքերում պրոֆեսորադասախոսական պաշտոն զբաղեցնող անձին պայմանագրի ժամկետի ավարտից առնվազն 2 ամիս առաջ տրվում է համապատասխան գրավոր ծանուցում:

V. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ.

20. Պայմանագրի լուծման կամ փոփոխման հիմքերն են՝

- 1) Աշխատանքի կազմակերպման պայմանների, ուսումնական ծրագրերի փոփոխման, ինչպես նաև ուսանողների թվաքանակի կրճատումը,
- 2) Պայմանագրում նշված պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը,
- 3) Պայմանագիրը կարող է լուծվել անձի մասնագիտական գիտելիքների անբավարարության պատճառով՝ ամբիոնի մասնագիտական եզրակացության հիման վրա:

21. Աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմնական հիմքերը և կարգը սահմանված են ՀՀ աշխատանքային օրենսգրքով, Համալսարանի ներքին կարգապահական կանոններով: